

ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ

ՆԱԽԱԳԻԾ

ՊԵՏՐՈՒԹՅԱՆ 1.ՆԱԽԱԲԱՆ

«Դատարանում վարքագծի կանոնները» (այսուհետ՝ նաև Կանոններ) սահմանում են դատավարության մասնակիցների (Փաստաբանի, դատախազի, վկաների, տուժողների, հայցվորների, պատասխանողների, դատավարության մասնակիցների ներկայացուցիչների) վարքագծի կանոնները և էթիկայի սկզբունքները:

Դատավարության մասնակիցների նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգը սահմանվում է «Օրենսգրքերով», «Կանոններով», և **հավելվածը հանդիսացող «դատավարության մասնակիցների նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգ»-ով:**

1. 1.Կանոնների նպատակը

Դատարաններում ձևավորված պրակտիկան անհրաժեշտություն է ստեղծել սահմանել (ձևակերպել) համընդհանուր կանոններ, որոնք կվերաբերեն դատավարության բոլոր մասնակիցներին:

1.2.Կանոնների կառուցվածքային միավորներ:

Կանոնների կառուցվածքային միավորներն են: Գլուխներ, որոնք իրենց հերթին բաժանված են համարակալված կետերի և ենթակետերի: Զգալի ծավալով համասեռ կետերը միավորված են գլուխներում: Դրույթները շարադրվում են հերթական համար ունեցող կետերի տեսքով :

ԳԼՈՒԽ 2. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ

2.1. Փաստաբանի դերը հասարակության մեջ

Իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: Փաստաբանը կոչված է ծառայել արդարադատության շահերին, ինչպես նաև այն իրավունքներին ու արտոնություններին, որոնք նրան վստահել են պաշտպանելու իր վստահորդի շահերը: :<<Փաստաբանի վարքագծի կանոնագիրք>>

Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության համար:

2.2. Փաստաբանի Մասնագիտական գործունեության սկզբունքները ձևավորվել են Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից, երաշխավորելու փաստաբանի պատշաճ գործունեությունը, ինչին բոլոր քաղաքակիրթ հասարակությունները կարևոր նշանակություն են տալիս: Սկզբունքների ձևավորման համար կարևոր նշանակություն են ունեցել Հայաստանի Հանրապետության փաստաբանների կողմից ձևավորված ավանդույթները, ինչպես նաև Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի կողմից սահմանած “Եվրոպայի փաստաբանների համար վարքագծի կանոնագրքի” դրույթները: Փաստաբանի կողմից այդ սկզբունքների ոչ ճիշտ կիրառումը կարող է հանգեցնել կարգապահական տույժերի: Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացումը սահմանվում է օրենսգրքերով « Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով « Փաստաբանի վարքագծի կանոնագրքով» և « Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգով »: :<<Փաստաբանի վարքագծի կանոնագիրք>>

2.3. Դատավորների հետ շփումներ

Փաստաբանը կարող է դատավորի հետ շփվել մասնագիտական քննարկումներ կատարելու նկատառումներից ելնելով, բացառությամբ, եթե տվյալ դատավորը քննում է փաստաբանի մասնակցությամբ գործ, և քննարկումը վերաբերվում է այդ գործին կամ կարող է այդպիսի տպավորություն թողնել: Փաստաբանի կողմից դատավորի հետ սոցիալական ցանցում “ընկեր” հանդիսանալու կամ նույն հետաքրքրությունների խմբում գտնվելու հանգամանքն ինքնին չի կարող հանդիսանալ նրանց կախյալ հարաբերությունների ապացույց (հիմք): <<Փաստաբանի վարքագծի կանոնագիրք>>

2.4 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մասնագիտության ընդհանուր բնութագիրը պահանջում է փաստաբանների միջև վստահություն և համագործակցություն, ինչը ելնում է վստահորդի շահերից, և այն նպատակ է հետապնդում, որ փաստաբանները խուսափեն ավելորդ դատավեճերից և այլ վնասաբեր գործողություններից, որոնք կարող են վատ անդրադառնալ մասնագիտության հեղինակության վրա: Այս կանոնը չի կարող մեկնաբանվել, որպես մասնագիտության շահերը ընդդեմ վստահորդի շահերի դասելուն ուղղված կոչ: Փաստաբանը պարտավոր է մյուս բոլոր փաստաբաններին ընդունել որպես մասնագիտական աշխատակիցներ և անկեղծ ու քաղաքավարի վերաբերմունք ցուցաբերել նրանց հանդեպ: <<Փաստաբանի վարքագծի կանոնագիրք>>

2.5 Ընդհանուր սահմանափակումները

2.5 .1 Փաստաբանը չպետք է՝

(1) թույլ տա այլ փաստաբանի նկատմամբ արժանապատվությունը և

փաստաբանի համբավն արատավորող գործողություններ ու արտահայտություններ,

(2) վատահորդին դրդի այլ փաստաբանի հետ ունեցած իրավական օգնություն
ցույց տալու մասին պայմանագրից հրաժարվել,

(3) վատահորդի հետ բացասական իմաստով քննարկի այլ փաստաբանի՝
անձնական կյանքին, նյութական վիճակին, մասնագիտական հմտությունները
քննադատող, հանձնարարության վարձատրության պայմաններին վերաբերող և
հանձնարարության կատարման հետ չառնչվող այլ հանգամանքներ: :<<Փաստաբանի
վարքագծի կանոնագիրք>>

5.3. Շփումը հակառակ կողմի հետ

Փաստաբանը չպետք է որևէ դատական գործի կամ խնդրի հետ կապված
անմիջական տեղեկություն փոխանակի հակառակորդ կողմի հետ, եթե այդ կողմին
ներկայացնում է մեկ այլ փաստաբան՝ առանց այդ փաստաբանի համաձայնության
(ավելին, վերջինս պետք է տեղեկացված լինի նման հաղորդակցության մասին),
բացառությամբ այն դեպքի, երբ հակառակորդ կողմն ինքն է նախաձեռնել հանդիպումը,
կամ այդ գործընթացի ժամանակ հակառակորդ կողմի փաստաբանը ներկա չէ:
Փաստաբանը պարտավոր է սույն կետում նշված կանոնի մասին նախազգուշացնել
հակառակորդ կողմին և հետագա քննարկումները կազմակերպել նրա փաստաբանի
ներկայությամբ: :<<Փաստաբանի վարքագծի կանոնագիրք>>

ԳԼՈՒԽ 3 Դատախազի դերը հասարակության մեջ

ԳԼՈՒԽ 4. ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐ

4.1 Հարգանք միմյանց նկատմամբ

Դատարանում դատավարության մասնակիցները պարտավոր են հարգանքով վերաբերվել դատավարության մասնակիցներին և մնալ կոռեկտության շրջանակներում, իսկ դատավարության մասնակիցների (մեղադրող կողմի, պաշտպանական կողմի և այլն) գործողություններին կամ ոչ կոռեկտ արտահայտություններին անդրադառնալ օրենքով սահմանված եղանակներով՝ դիմումների, հայտարարությունների, միջնորդությունների, բացարկների, առարկությունների կամ բողոքների միջոցով:

2. Դատավարության մասնակիցները չպետք է կատարեն այնպիսի գործողություններ, որոնք կարող են կասկածի տակ դնել նրանց հեղինակությունը, ազնվությունը և անձեռնմխելիությունը

ԳԼՈՒԽ 5 ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՀԵՏ

51. Վարվելակերպի կանոնները դատարանում

5.1 Դատավարության մասնակիցները ովքեր ներկայանում կամ մասնակցում են գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվեն այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում դատավարության մասնակիցների դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ: <<Փաստաբանի վարքագծի կանոնագիրք>>

Դատախազը

5.2 Չուշանալ. Այն դեպքում, երբ անգամ փոքր-ինչ ուշացումն անխուսափելի է, անհապաղ տեղեկացրեք դրա մասին դատական նիստերի քարտուղարին: (Սան Դիեգոյի իրավաբանների ընկերակցություն, այսուհետ՝ Սան Դիեգո)

5.3 Ոտքի կանգնել. Դատարանին դիմելիս միշտ ոտքի կանգնեք: Բացառիկ դեպքերում, երբ դրա կարիքն իսկապես կա, խնդրեք դատարանին թույլ տալ, որ նստած խոսեք (Սան Դիեգո):

5.4 Ձեր ներկայանալու մասին հայտարարելը. Պաշտոնապես հայտարարեք ձեր ներկայանալու մասին՝ ձեր անունը և թե որ կողմն եք ներկայացնում (Սան Դիեգո):

5.5 Եղեք քաղաքավարի. Քաղաքավարի և հարգարժան եղեք դատարանի նկատմամբ: Քաղաքավարություն դրսևորեք նաև դատական նիստերի դահլիճի կարգադրիչների, պաշտպանի, կողմերի և վկաների նկատմամբ: Եռանդուն պաշտպանությունն ու քաղաքավարությունն անհամատեղելի չեն: (Սան Դիեգո)

5.6 Խուսափեք ձեր վրդովմունքը ի ցույց դնելուց. Մի խոժոռվեք կամ մի արեք այնպիսի շարժումներ, որոնք կարող են մեկնաբանվել որպես դատարանին կամ վերջինիս դիրքորոշմանը հավանություն չտալու ժեստեր. (Սան Դիեգո)

5.7. Անձնական արհամարհական վերաբերմունք մի դրսևորեք դատավորի կամ երդվյալ ատենակալների նկատմամբ. Անպատշաճորեն մի մեղադրեք և որևէ կերպ հարձակում մի գործեք դատարանի, երդվյալ ատենակալների, վստահորդների կամ վկաների վրա, երբ ինքներդ ձեզ պատասխանատվությունից ազատելու համար գործադրած ջանքերից ստանում եք անբարենպաստ արդյունք. (Սան Դիեգո)

5.8 Անթույլատրելի ընդդիմազերծ հաղորդակցություն դատարանի հետ. Մի նախաձեռնեք ընդդիմազերծ (միակողմանի) հաղորդակցություն դատարանի հետ, բացառությամբ դատարանի կանոններով հստակորեն թույլատրված դեպքերի:

Հասկապես հասարակական վայրում դատավորի առջև որևէ ընթացիկ գործի վերաբերյալ հարց բարձրացնելուց զգուշացեք: (Ման Դիեզո)

5.9 Անհիմն պահանջներ մի ներկայացրեք. Թույլ մի տվեք, որ ձեզ օգտագործեն որպես անհիմն փաստարկների առաջ քաշման միջոց, կամ էլ որպես գործողության պատճառ: (Ման Դիեզո)

5.10.Ժամանակային սահմանափակումներ. Հիշեք, որ դատարանը ձեր գործը լսելու համար սահմանափակ ժամանակ ունի և պատրաստ եղեք հարմարվելու այդ հանգամանքին: Ձեր պատասխանների համար կատարեք բարեխիղճ հաշվարկ: Ուշադիր եղեք դատարանի նկատմամբ: Մի եղեք ազահ («Ինձ մի ժամ է հարկավոր»), բայց նաև մի կրճատեք ձեր ասելիքը: Ցուցումը ստանալուց հետո («Պաշտպա՛ն, Դուք ունեք հինգ րոպե») կատարեք այն: (Դատաքննության, ինչպես նաև միջնորդություններ լսելու համար նախատեսված ժամանակը սահմանափակելու միտում կա) (Ման Դիեզո)

5.11 Դիմեք դատարանին և ոչ թե ձեր հակառակորդին. Ուղղեք ձեր բոլոր դիտողությունները դատարանին (նույնիսկ նրանք, որոնք հասցեագրված են ձեր հակառակորդին): Բացառիկ հանգամանքներում, երբ հարկավոր է դիմել ձեր հակառակորդին, նախապես ստացեք դատարանի թույլտվությունը: Այնուամենայնիվ, շատ դեպքերում դիտողությունը կարող է, գոնե ձևականորեն, ուղղվել դատարանին:

5.12 Ներկայացրեք ձեր փաստարկները դատարանին և ոչ թե վիճեք դատարանի հետ. Առաջնորդվեք «Հարձակվել փաստարկի և ոչ թե խոսողի վրա» արտահայտությամբ: Մատնանշեք մյուս կողմի դիրքորոշման կամ փաստարկների և ոչ թե դատարանի նախնական կարծիքի թերությունները: Դժվար թե դատարանի դատողական կարողությունները վիճարկելը որևէ լավ բանի հանգեցնի: (Ման Դիեզո)

5.13 Մի ընդհատեք. Չնայած սա հստակ գիտակցում են բոլորը, այնուամենայնիվ շատ փաստաբաններ ընդհատում են դատարանին: Նմանապես, որոշ բացառություններով (օրինակ՝ առարկությունն ընդհատելը), մի ընդհատեք հակառակ կողմի պաշտպանին փաստարկների ներկայացման ժամանակ: (Սան Դիեգո)

5.14 Դատարանի կողմից որոշում կայացնելուց հետո դադարեք վիճել. Մի շարունակեք վիճել որևէ հարցի շուրջ, եթե դատարանը դրա վերաբերյալ կայացրել է որոշում: Եթե դատարանը որոշում է կայացրել, վեճը շարունակելը անքաղաքավարություն է համարվում: Ուստի, փորձեք հնարավորության դեպքում մինչև դատարանի դիրքորոշում հայտնելը ներկայացնել ձեր բոլոր փաստարկները: Երբեմն, դատարանն իր որոշումը կայացնում է, նախքան դուք կհասցնեք ներկայացնել ձեր դիրքորոշումը արձանագրված փաստի վերաբերյալ և անհրաժեշտ է լինում պատշաճ բացատրական դիտարկումներ անել մինչև հաջորդ քայլին անցնելը: (Սան Դիեգո)

5.15 Խուսափեք ձեր վրդովմունքը ի ցույց դնելուց. Մի խոժոռվեք կամ մի արեք այնպիսի շարժումներ, որոնք կարող են մեկնաբանվել որպես դատարանին կամ վերջինիս դիրքորոշմանը հավանություն չտալու ժեստեր: (Որոշ իրավաբաններ միգուցե նույնիսկ չեն գիտակցում, որ դժգոհություն են ցույց տալիս: Սովորեք վերահսկել այն, թե ինչ հաղորդագրություններ են ուղարկում ձեր արտահայտություններն ու մարմնի լեզուն: Պատշաճ հարգանքը ձեզ թույլ չի տա բառերով կամ ժեստերով ցույց տալ, որ հավանություն չեք տալիս դատարանի դիրքորոշմանը: Ունեցեք պատրաստ պատասխան (նույնիսկ, եթե հենց նոր դաշույնը խրեցին ձեր թիակների միջև), որը կհարթեցնի վնասը (օրինակ՝ «Շատ լավ, հարգելի՛ Դատարան») և անցեք ձեր մյուս քայլին: Մի մոռացեք, որ մեկ ուրիշ օր հայտնվելու եք այդ նույն դատավորի առջև: (Սան Դիեգո)

516 Պատշաճ հագնվեք. Դատական նիստերի դահլիճը անընդունելի կամ ամենօրյա հագուստով «հայտարարություն» անելու վայր չէ: (Սան Դիեգո)

517 Մի հարձակվեք հակառակ կողմի պաշտպանի վրա. արհամարհական դիտողություններով և ժեստերով հակառակ կողմի նկատմամբ տհաճ զգացմունքներ ցուցադրելը կարժեգրկի ձեզ դատարանի առջև, դա սովորաբար հակահարվածի առիթ է դառնում: Անհատական հարձակումների մեջ ներգրավվելը առնվազն շեղում է դատարանին այն հարցերից, որոնք ցանկանում եք ներկայացնել: Եթե ձեր հակառակորդը հարձակվում է ձեր վրա, պատասխանեք ձեր հակառակորդի անողջամիտ պահվածքին արժանապատվությամբ և ողջամտությամբ: (Սան Դիեգո)

5.18 Դատավորի հետ իրենց հարաբերություններում բոլոր փաստաբանները պետք է.

Խստորեն հարգեն դատավորների անկախությունն ու անկողմնակալությունը: Մասնավորապես, նրանք չպետք է կասկածի տակ դնեն դատական որոշումները, ոչ էլ խանգարեն դրանց ի կատար ածմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք իրականացնում են ըստ օրենքի բողոք ներկայացնելու կամ այլ գործընթաց նախաձեռնելու իրենց իրավունքները:

Լինեն անաչառ և արդար դատական վարույթի ընթացքում:

Խուսափեն դատավորներին հրապարակավ, ոչ պատշաճ ձևով քննադատելուց: (Կոսովոյի՝ Դատախազների էթիկայի և պրոֆեսիոնալ վարքագծի կանոնագիրը, մաս 2, բաժին Ա, կետ 7)

5.19 Պաշտպանի արհեստավարժ վարքագիծ. Պաշտպանները պետք է հարգանք և քաղաքավարություն դրսևորեն Պալատի, դատախազի և դատախազության անդամների, քարտուղարի և քարտուղարության աշխատակազմի, վստահորդի, հակառակ կողմի պաշտպանի, մեղադրյալների, տուժողների, վկաների և վարույթում

ներգրավված ցանկացած այլ անձանց հետ հարաբերություններում: (Միջազգային քրեական դատարանի որոշում՝ ASP/4/Որոշում 1, պաշտպանի պրոֆեսիոնալ վարքագծի կանոնագիրք, հոդված 7, այսուհետ՝ ՄՔԴ կանոնագիրք)

5.20 Հաղորդակցությունը Պալատների և դատավորների հետ.

Պաշտպանը չպետք է.

Վարույթի համատեքստից դուրս որևէ դատական գործի հետ կապված շփում ունենա դատավորի կամ Պալատի հետ, կամ

Պալատի դատավորին քարտուղարությունից բացի այլ ճանապարհով ապացույց, գրառումներ կամ փաստաթղթեր փոխանցի: (ՄՔԴ կանոնագիրք, հոդված 23),

եթե բացառիկ հանգամանքներում տվյալ գործը քննող դատավորը կամ Պալատը թույլ չի տվել պաշտպանին այդպես վարվել:

5.21 Դատարանի առջև ունեցած պարտականությունները. Պաշտպանը չպետք է խաբի կամ գիտակցելով ապակողմնորոշի դատարանին: Նա պետք է անհրաժեշտ բոլոր քայլերը ձեռնարկի ուղղելու համար իր, օգնականների կամ աշխատակազմի կողմից հնչեցված սխալ հայտարարությունները այն բանից հետո, երբ հասկանա, որ արված հայտարարությունը սխալ է: (ՄՔԴ կանոնագիրք, հոդված 24, բաժին 3)

5.22 Ապացույց. Դատապաշտպանը պետք է միշտ պահպանի ապացույցի ամբողջականությունը այն գրավոր, բանավոր կամ այլ ձևով դատարանին ներկայացնելիս: Նա չպետք է ներկայացնի այնպիսի ապացույց, որը գիտի, որ սխալ է: (ՄՔԴ կանոնագիրք, հոդված 25, բաժին 1)

5.23 Հարաբերությունները մյուս պաշտպանի հետ. Մյուս պաշտպանի և նրա վստահորդների հետ հարաբերություններում պաշտպանը պետք է գործի արդար, բարեխղճորեն և քաղաքավարի: (ՄՔԴ կանոնագիրք, հոդված 27, բաժին 1)

5.24. Պաշտպանի կողմից արդեն իսկ ներկայացված անձանց հետ հարաբերությունները. Պաշտպանը չպետք է առանց մյուս պաշտպանի թույլտվության ուղղակիորեն դիմի այդ պաշտպանի վստահորդին: (ՄՔԴ կանոնագիրք, հոդված 28)

5.25 Հարաբերությունները վկաների և տուժողների հետ. Պաշտպանը չպետք է վախեցնի, հետապնդի կամ նվաստացնի վկաներին և տուժողներին, կամ էլ ենթարկի նրանց անհամաչափ կամ ոչ անհրաժեշտ ճնշման դատական նիստերի դահլիճում կամ դրանից դուրս: (ՄՔԴ կանոնագիրք, հոդված 29, բաժին 1)

5.26. Պաշտպանը պետք է հատկապես նրբանկատություն ցուցաբերի ֆիզիկական, հոգեբանական կամ սեռական բնույթի բռնության զոհերի, երեխաների, տարեցների և հաշմանդամների նկատմամբ: (ՄՔԴ կանոնագիրք, հոդված 29, բաժին 2)

5.27. Դատարանի կամ տրիբունալի առջև հանդես գալիս կամ դատական գործի քննությանը մասնակցելիս ցանկացած իրավաբան պետք է հետևի այդ դատարանում կիրառվող վարքագծի կանոններին: (Եվրոպայի իրավաբանների վարքագծի կանոնագիրք, հոդված 4.1)

5.28 Դատական նիստը բացվում է դատական գործը վարողի ներկայանալով դատական նիստերի դահլիճ և դրա ավարտը ազդարարվում է նրա՝ դատական նիստերի դահլիճից հեռանալով: Այն պահին, երբ դատական նիստը հայտարարվում է բացված և մուրճի թակոցը լսվում է դատական նիստերի դահլիճում, անցուդարձը կանգ է առնում, և ուշադրությունը սևեռվում է դատավորի բացման խոսքի վրա: (քաղաք Սավանա, Վրաստան, դատարանի կանոններ)

5.29 Իրավաբանը և դատարանը:

- a. Ցանկացած իրավաբան, ով հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության կամ այլ օտարերկրյա պետության դատարանի առջև կամ մասնակցում է այդ

դատարանի դատական գործի քննությանը, պետք է հարգի այդ դատարանում գործող վարքագծի կանոնները և հետևի դրանց:

- b. Իրավաբանը չպետք է որևէ առկախ հարցի հետ կապված կապ հաստատի կամ շփվի դատավորի հետ առանց համաձայնության գալու հակառակ կողմի իրավաբանի հետ, եթե դա չի թույլատրվում դատավարության համապատասխան կանոններով:
- c. Իրավաբանը չպետք է գիտակցելով սխալ ապացույց ներկայացնի դատարանին:
- d. Կանոնները, որոնք կարգավորում են իրավաբանի հարաբերությունները դատարանների հետ, վերաբերում են նաև արբիտրների և դատական կամ կիսադատական գործառույթներ իրականացնող ցանկացած այլ անձանց հետ հարաբերություններին: (Վրաստանի՝ Փաստաբանների էթիկայի կանոնագիրք, հոդված 9)

5.30 Հարաբերությունները քրեական գործի/դատավարության մասնակիցների հետ:

- e. Դատախազը պարտավոր է առաջնորդվել ներկայիս կանոնագրքով, ներքին նորմերով և չափանիշներով՝ ապահովելու համար քրեական գործի քննությանը մասնակցող այլ կողմերի նկատմամբ պատշաճ և պրոֆեսիոնալ վարքագիծ:
- f. Մինչդատական և դատական փուլերում դատախազից պահանջվում է հաղորդակցություն չունենալ դատավորի հետ մասնագիտական, ինչպես նաև անձնական շարժառիթներով (բացառությամբ բուն լսումների փուլի), ժամանակին ներկայանալ դատական լսումներին, հետևել դատարանի պաշտոնական հանդերձանքի ոճին, խուսափել վիրավորական և նվաստացնող ցանկացած գործողությունից կամ խոսքից, դատաքննությանը մասնակցող մյուս մասնակիցների նկատմամբ չափազանց դրական կամ չափազանց բացասական վերաբերմունք ցուցաբերելուց և գործի նկատմամբ իր անձնական

վերաբերմունքը արտահայտելուց: (Վրաստանի՝ Դատախազների էթիկայի կանոնագիրք, հոդված 15)

5.31 Դատախազը քրեական գործում պետք է:

(a) խուսափի ներկայացնել մեղադրանք, որի հիմքում հավանական պատճառ չկա, և նա դրա մասին տեղյակ է:

(b) ողջամիտ ջանքեր գործադրի երաշխավորելու, որ մեղադրյալին տեղեկացվի պաշտպան ունենալու իր իրավունքի և ընթացակարգի մասին, ինչպես նաև տրվի դրա իրականացման համար ողջամիտ հնարավորություն

(c) խուսափի փորձել հասնելու այն բանին, որ ձգտելուց հասնել նրան, որ չներկայացած մեղադրյալը հրաժարվի իր մինչդատական կարևոր իրավունքներից, ինչպես օրինակ նախնական լսման իրավունքից:

(d) ժամանակին պաշտպանության կողմին ներկայացնի այն բոլոր ապացույցները և տեղեկությունները, որոնք հայտնի են իրեն և որոնք հնարավոր է հերքեն կամ մեղմացնեն մեղադրյալի մեղքը: Իսկ ինչ վերաբերում է պատժին, դատախազը պետք է ներկայացնի պաշտպանության կողմին կամ դատարանին պատիժը մեղմացնող այն բոլոր տեղեկությունները, որոնք իրեն հայտնի են, բացառությամբ այն դեպքերի, երբ դատախազն ազատված է այս պատասխանատվությունից դատարանի պաշտպանական որոշմամբ:

5.32 Երբ դատախազին հայտնի է դառնում նոր, արժանահավատ և կարևոր ապացույց, որը ստեղծում է ողջամիտ հավանականություն, որ դատապարտված անձը չի կատարել այն հանցանքը, որի համար դատապարտվել է, ապա դատախազը պետք է.

(1) անհապաղ ներկայացնի այդ ապացույցը համապատասխան դատարանին կամ լիազոր մարմնին, և

(2) եթե դատապարտումն իրականացվել է դատախազի իրավասության շրջանակներում՝

- (i) անհապաղ ներկայացնի այդ ապացույցը մեղադրյալին, քանի դեռ դատարանը չի արձանագրել ուշացում, և
- (ii) նախաձեռնի հետագա քննություն կամ ողջամիտ ջանքեր գործադրի, որպեսզի նպաստի քննության նախաձեռնմանը, պարզելու համար՝ արդյոք մեղադրյալը դատապարտվել է մի հանցագործության համար, որը նա կատարել է, թե ոչ:
- (h) Երբ դատախազին հայտնի է հստակ և համոզիչ ապացույց, որը հաստատում է, որ մեղադրյալը դատապարտվել է մի հանցագործության համար, որը նա չի կատարել, դատախազն իր իրավասության շրջանակներում պետք է ջանա վերանայել դատապարտումը: (Ամերիկյան իրավաբանների ընկերակցության՝ Պրոֆեսիոնալ վարքագծի մոդելային կանոններ, կանոն 3.8))

5.33 ԿԱՆՈՆՆԵՐ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Դատարան և դատավարություն.

- 5.34 Դատավորը պետք է իր աշխատանքում հանգիստ, զուսպ և արժանապատիվ մնա:
- 5.35 Դատավորը պետք է համբերատար և քաղաքավարի լինի վարույթի բոլոր մասնակիցների, գործընկերների և դատարանի աշխատակիցների հետ՝ պահանջելով նույն վերաբերմունքը մյուսներից:
- 5.36 Դատավորը պետք է արդարադատություն իրականացնելիս լինի անաչառ և արդար նաև ստեղծի նման տպավորություն ողջամիտ դիտողի մոտ: Այդ նպատակով դատավորը պետք է վարույթի մասնակիցներին հավասար վերաբերմունք ցուցաբերի և խուսափի ոչ անհրաժեշտ և անտեղի մեկնաբանություններից և դիտողություններից: Նա պետք է խուսափի շահագրգռվածությունից, բարկանալուց, ձայնը բարձրացնելուց,

վերաբերմունք արտահայտող դեմքի արտահայտությունից և մարմնի շարժումների լեզվից և այլ նմանատիպ բաներից, որոնք կարող են կողմնակալության տպավորություն թողնել:

5.37 Դատավորը պետք է գործերը քննի ողջամիտ ժամկետում՝ խուսափելով շտապելուց և մակերեսայնությունից, բայց նաև խուսափելուց ձևական և ոչ ողջամիտ հիմքերով որոշում կայացնելը երկարաձգելուց: Դատավորը չպետք է թույլ տա վարույթի մասնակիցներին չարաշահել իրենց իրավունքները կամ երկարաձգել վարույթը: (Էստոնիայի՝ Դատավորների էթիկայի կանոնագիրք, բաժիններ 12-15)

5.38 Դատավորը պետք է հասանելիություն և հարգանք ցուցաբերի անհատների նկատմամբ, լինի համբերատար, արժանապատիվ և քաղաքավարի դատավարության կողմերի, մեղադրյալների, վկաների, իրավաբանների, դատախազների, այլ դատավորների, ոչ մասնագետ դատավորների և երրորդ կողմի նկատմամբ, ում հետ նա առնչվում է ի պաշտոնե լիազորությունների շրջանակներում, և պետք է պահանջի պատասխան վերաբերմունք իրավաբաններից, աշխատակազմից, դատարանի աշխատակիցներից և այլոցից, ովքեր ենթակա են նրա որոշումներին ու վերահսկմանը: (Կոսովոյի՝ Կանոնագիրք դատավորների համար, կետ 9)

5.39 Դատավորը պետք է կարգ ու կանոն և պատշաճ վարվելակերպ պահպանի դատարանի առջև անցկացվող բոլոր վարույթներում և լինի համբերատար, արժանապատիվ և քաղաքավարի դատական կողմերի, երդվյալատենակալների, վկաների, իրավաբանների և բոլոր նրանց նկատմամբ, ում հետ դատավորն առնչվում է իր ի պաշտոնե լիազորությունների շրջանակներում: Դատավորը պետք է նմանատիպ պահվածք պահանջի օրինական ներկայացուցիչներից, դատարանի աշխատակազմից և բոլոր

նրանցից, ովքեր ենթակա են դատավորի ազդեցությանը, հրահանգներին կամ վերահսկմանը: (Դատավորի վարքագծի բանգալորյան սկզբունքներ, մաս 6, բաժին 6.6)

5.40 Դատավորը պետք է միշտ գործի այնպես, որ պաշտպանի դատավորի պաշտոնի պատիվն ու բարձր հեղինակությունը: Դատավորը պետք է խուսափի այն բոլոր անպատշաճություններից, որոնք կարող են վնասել դատավորի բարձր դիրքը, պատիվը և արժանապատվությունը:

5.41 Դատավորը պետք է պահպանի գործի վերաբերյալ իր ճիշտ գնահատականը և չպետք է ազդեցության ենթարկվի որևէ գործադիր կամ օրենսդիր կառույցների կամ անհատների կողմից: Պետք է ձեռնպահ մնա ընթացիկ վարույթի վերաբերյալ որևէ հրապարակավ մեկնաբանություն և քննադատություն անելուց:

5.42 Դատավորը պետք է ինքնաբացարկ հայտնի վարույթում, որտեղ դատավորի անաչառությունը կարող է ողջամտորեն կասկածի տակ դրվել:

5.43 Դատական պարտականությունները կատարելիս դատավորը պետք է խուսափի կողմնակալություն կամ նախապաշարմունքներ ի ցույց դնող պահվածքից կամ բառերից և չպետք է թույլ տա այդպես վարվել աշխատակազմին, դատարանի աշխատակիցներին և այլոց, ովքեր ենթակա են դատավորի որոշումներին ու վերահսկման: (Կոսովոյի՝ Կանոնագիրք դատավորների համար, կետ 8)

5.44 Բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի դատավորը պետք է խուսափի և թույլ չտա ընդդիմազերծ հաղորդակցություն: Այդպիսի հաղորդակցության կայացման դեպքում դատավորը պետք է անհապաղ

հայտնի մյուս կողմերին և հնարավորության դեպքում ապահովի նրանց ներկայությունը: (Կոստվոյի՝ Էթիկայի և պրոֆեսիոնալ վարքագծի կանոնագիրք դատավորների համար, մաս III, բաժին Ա, կետ 7)

5.45 Կանոնների մեկնաբանման իրավունքը տրված է Դատարանների նախագահների խորհրդին: